Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

15 մայիսի 2014թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության վարչության պետ Ա. Սողոմոնյանը, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Թ. Ղազարյան/

2.Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

3. Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի գերակայության և դրա այլընտրանքային հնարավորությունների իրացման մասին

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Ոսկանյան /

Օրակարգի առաջին հարցի՝ «Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Թադևոս Ղազարյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի գերակայության և դրա այլընտրանքային հնարավորությունների իրացման մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Աննա Ոսկանյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ՝ համայնքերում առկա խնդիրների մասին ելույթներով և հարցադրումներով հանդես եկան Աշոտավան գյուղական համայնքի ղեկավար Արմեն Բեգլարյանը, Աղիտու գյուղական համայնքի ղեկավար Ավետիս,

Ավետիսյանը, Նորավան գյուղական համայնքի ղեկավար Սլավիկ Պապյանը, Սյունիք գյուղական համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը:

Բարձրացված հարցադրումներին տրվեցին պարզաբանումներ զեկուցողների և մարզպետի կողմից:

Հանձնարարվեց աշխատակազմի՝

- ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Թ. Ղազարյանին
- ցուցաբերել գործնական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին՝ դոտացիայի ելակետային տվյալները ներկայացնելու գործընթացում.
- մարզպետի տեղակալների հետ քննարկել համայնքներում հողի հարկի հավաքագրման գործընթացում առկա թերացումների պատճառները և ներկայացնել լուծումներ հավաքագրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ.
- գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյանին՝
- անթույլատրելի համարել բաշխված սերմացուի, վառելիքի և պարարտանյութի դիմաց պարտքերի կուտակումը, փոխմարզպետների հետ քննարկել և սահմանել ժամանակացույց հավաքագրման գործընթացն ավարտելու համար:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ **Վ. Հակոբյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55